ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՇՎԵԴԻԱ



IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՇՎԵԴԻԱ

IOM International Organization for Migration
Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն

ՄՄԿ

Սույն ուղեցույցը հրատարակվել է Իտալիայի Կառավարության ֆինանսավորմամբ:

© Հեղինակային իրավունքը պաշտպանված է: Սույն հրատարակության ոչ մի մաս չի կարող վերարտադրվել, պահպանվել որոնողական համակարգում կամ փոխանցվել էլեկտրոնային, մեխանիկական, պատճենահանման, ձայնագրման կամ այլ եղանակով առանց հրատարակչի նախնական գրավոր թույլատվության:

*****

Սույն հրատարակությունում արտահայտված կարծիքները կարող են չհամընկնել ՄՄԿ-ի կամ նրա անդամ-պետությունների պաշտոնական տեսակետների հետ:

*****

Հրատարակիչ՝ Միգրացիայի միջազգային կազմակերպություն

Միգրացիայի միջազգային կազմակերպություն (ՄՄԿ)
Հայաստանյան առաքելություն
Հայաստան • Երևան 0010 • ՄԱԿ-ի գրասենյակ
• Պետրոս Ադամյան փողոց 14, 1-ին հարկ
Հեռ.՝ (+374 10) 58 56 92 • 58 37 86 • Հեռապատճեն՝ (+374 10) 54 33 65
• Էլ.փոստ՝ iom@arminco.com • http://www.iom.int/armenia

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Վիզա Շվեդիա այցելելու համար.
ընդհանուր տեղեկություններ 5
2. Ներգաղթ զբաղվածության նպատակներով 5
3. Շվեդիայում ուսանելը..... 8
4. Կացություն 10
5. Ապաստան հայցողներ և փախստականներ 12
6. Ընտանիքների վերամիավորում 13
7. Առողջապահական համակարգը..... 13
8. Սոցիալական ապահովագրության համակարգը..... 14
9. Բնակարանային պայմաններ..... 14
10. Օտարերկրյա դիպլոմների և աստիճանների
ճանաչում..... 14
11. Միգրանտներին առաջարկվող
աջակցության ծառայություններ..... 15
12. Քաղաքացիություն..... 18
13. Միգրացիայի համար պատասխանատու
պետական կառույցներ 19

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՄԻԳՐԱՆՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ
ՇՎԵԴԻԱ

1. Վիզա Շվեդիա այցելելու համար. ընդհանուր տեղեկություններ

Շվեդիա մուտք գործելու համար պահանջվում է C տիպի Շենգենյան վիզա:
Դիմորդների բազմաթիվ կատեգորիաներ (օրինականորեն բնակվող քաղաքացիների ընտանիքի անդամներ, ուսանողներ և թոշակառուներ, լրագրողներ և այլն) կարող են ձեռք բերել անվճար վիզաներ:

Որոշ կատեգորիաների անձանց համար, օրինակ, գործարարներ, ուսանողներ և լրագրողներ, փաստաթղթերի պահանջները պարզեցված են: Հաճախ ճամփորդողների որոշակի կատեգորիաների (ներառյալ գործարարները, լրագրողները, ուսանողները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները) կտրամադրվի բազմակի մուտքի վիզա՝ վավերության երկար ժամկետներով, իսկ դիվանագիտական անձնագրեր կրողները կազատվեն վիզայի պարտավորությունից:
Փաստաթղթերի և ընթացակարգերի մասին լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Միգրացիոն Խորհրդի կայքը (http://www.migrationsverket.se/english.jsp) կամ ձեր երկրում Շվեդիայի դեսպանատուն.

Հայաստանի Հանրապետությունում
Շվեդիայի Թագավորության դեսպանություն
Նստավայրը Երևանում՝ Հանրապետության հրապարակ, 2-րդ կառավարական շենք
Հեռ.՝ (374 1) 544041, ներքին հեռ.՝ 289
Հեռ./Ֆաքս՝ (374 1) 543925
էլ. փոստ՝ armscandebassy@mfa.am

2. Ներգաղթ զբաղվածության նպատակներով

2008 թ. դեկտեմբերի 15-ին Շվեդիայում Պառլամենտի որոշմամբ ներդրվեցին աշխատանքային ներգաղթի վերաբերյալ նոր կանոններ:
Սա նշանակում է, որ աշխատաշուկայի գործողությունների նախկին կարգը վերացվել է, և այժմ աշխատուժի կարիքը որոշում է գործատուն՝ ի

տարբերություն նախորդ գործելակերպի, երբ որոշումը կայացնում էր Շվեդիայի Զբաղվածության պետական ծառայությունը: Միգրացիոն Խորհուրդը քննության է առնում այն հարցը, թե զբաղվածության վարձատրությունը և մյուս պայմանները համապատասխանու՞մ են արդյոք գոյություն ունեցող հավաքական համաձայնագրերին կամ ոլորտում ընդունված մակարդակին:

Նոր ձևեր

Նոր կանոնների կապակցությամբ Միգրացիոն Խորհուրդն օգտագործում է նոր դիմումի ձևեր: Ի թիվս այլոց կա զբաղվածության առաջարկի ձև, որը պետք է լրացնի գործատուն ԵՄ/ԵՏՏ-ից դուրս գտնվող երկրներից աշխատողներ հավաքագրելիս, և որը աշխատողները պետք է կցեն իրենց դիմումին:

Աշխատանքի թույլտվություններ

Շվեդիայում աշխատելու համար դուք պետք է ունենաք աշխատանքի թույլտվություն: Թույլտվություն ստանալուց հետո դա պետք է մուտք արվի ձեր անձնագիր՝ նախքան ձեր Շվեդիա ժամանելը: Եթե դուք ունեք աշխատանքի առաջարկ երեք ամսից ավելի երկար ժամկետով, ապա անհրաժեշտ է Շվեդիայի կացության թույլտվություն: Եթե ծրագրում եք մնալ Շվեդիայում երեք ամսից պակաս ժամկետով, ապա կացության թույլտվություն հարկավոր չէ, սակայն անհրաժեշտ է Շենգենյան վիզա:

Շվեդիայի համար գոյություն ունեն մի քանի տիպի կացության թույլտվություններ՝ կատարող արվեստագետների, մարզիկների, օտարերկրացի տնային աշխատողների, հրավիրյալ հետազոտողների, ինքնազբաղվածների, աշխատող արձակուրդ անցկացնողների և սեզոնային զբաղվածության համար:

Պահանջներ

- Դուք պետք է ունենաք գրավոր զբաղվածության առաջարկ Շվեդիայում, որի հատուկ ձևը պետք է լրացնի ձեր գործատուն, և որը դուք պետք է կցեք ձեր դիմումին: Շվեդիայի Միգրացիոն Խորհուրդը դիմումի նոր ձևերը զետեղել է իր կայքում՝ www.migrationsverket.se/english.jsp:
- Ձեր գործատուն պետք է ձեզ համար երաշխավորի վարձատրություն, ապահովագրություն և զբաղվածության այլ պայմաններ, որոնք հավասար լինեն առնվազն հավաքական

համաձայնագրին կամ տվյալ մասնագիտության կամ զբաղմունքի ոլորտում Շվեդիայի գործելակերպին:

- Դուք պետք է զբաղվածությունից վաստակեք բավականաչափ՝ ձեր կենսապահովման համար:
- Ձեր գործատուն պետք է համապատասխան միությանը հնարավորություն տա կարծիք հայտնելու զբաղվածության պայմանների վերաբերյալ:
- Ձեր գործատուն պետք է թափուր աշխատատեղի մասին հայտարարություն տված լինի Շվեդիայում և ԵՄ-ում:

Եթե զբաղվածությունը ժամանակավոր է, ապա կացության և աշխատանքի թույլտվությունը վավեր կլինեն միայն այդ ժամանակահատվածում՝ ամեն անգամ առավելագույնը 2 տարի: 48 ամսից հետո դուք կարող եք ստանալ մշտական բնակության թույլտվություն:

Լրացուցիչ տեղեկություններ և աշխատանքի թույլտվության դիմումին ընթացք տալու համար պահանջվող փաստաթղթեր կարելի է ձեռք բերել դեսպանատան կայքից և Միգրացիոն Խորհրդի կայքից՝ http://www.migrationsverket.se/english.jsp:

Աշխատաշուկայի կարիքները մինչև 2009 թվականը

Նոր շրջանավարտներ	Աշխատանքային փորձ ունեցողներ	Ակնկալվում է, որ կնվազեն մինչև 2009 թ.
Շահագործման, սպասարկման և ջեռուցման, օդափոխման և օդորակման համակարգերի մասնագետներ	էլեկտրիկներ	Պարտադիր ուսուցմամբ դպրոցների ուսուցիչներ - Լեզու/հասարակա-գիտություն
Մասնագիտացած՝ ուսուցում անցած բուժքույրեր	Շինարարության ճարտարագետներ	Երեխաների խնամք և ազատ ժամանց
Տրանսպորտի ոլորտի կրթություն	Հսկողության (կառավարման) տեսություն	Պարտադիր ուսուցմամբ դպրոցների ուսուցիչներ

		- Մաթեմատիկա/բնական գիտություններ
Հեռահաղորդակցություններ և էլեկտրոնիկա	Շահագործման, սպասարկման և ջեռուցման, օդափոխման և օդորակման համակարգերի մասնագետներ	Առևտուր և վարչարարություն
Գյուղատնտեսություն և անտառագիտություն (անտառաբուծություն)	Արդյունաբերական	Ավագ դպրոցի ուսուցիչներ - Պատմություն/հասա-րակագիտություն

Աշխատանքի որոնման կայքեր

Եթե դուք ցանկանում եք ապրել և աշխատել Շվեդիայում, ապա նախքան աշխատանքի թույլտվության համար դիմելը պետք է աշխատանք գտնեք Շվեդիայում և ներկայացնեք անհրաժեշտ փաստաթղթեր՝ ապացուցելու, որ ունեք աշխատանքի առաջարկ շվեդ գործատուից: Կարող եք այցելել աշխատանքի որոնման հետևյալ կայքերը.
http://www.expatsinsweden.com
http://www.jobsinstockholm.com/
http://www.jobinsweden.net/english/
http://www.4icj.com/se/
http://www.learn4good.com/jobs/language/english/list/country/sweden
կամ Շվեդիայի Զբաղվածության պետական ծառայություն՝
http://www.arbetsformedlingen.se/:

3. Շվեդիայում ուսանելը

Եթե ձեր ուսումնառությունը Շվեդիայում կտևի երեք ամսից ավելի, ապա պետք է ձեռք բերեք կացության թույլտվություն նախքան Շվեդիա ժամանելը: Թույլտվությունները տրամադրվում են Շվեդիայի և Միգրացիոն Խորհրդի կողմից: Վերջինիս կայքը տրամադրում է մանրամասն խորհուրդներ հետևյալ հասցեում՝
http://www.migrationsverket.se/english.jsp:

Շվեդիայում ուսանելու մասին կոնկրետ տեղեկությունների համար այցելեք http://www.studyin.sweden.se/templates/cs/SISFrontPage____4908.aspx:

Ներկայումս կան Շվեդիայի համալսարաններում անգլերեն լեզվով առաջարկվող բազմաթիվ ծրագրեր: Դրանց կարելի է ծանոթանալ հետևյալ հասցեում՝ http://www.studyinsweden.se/templates/cs/SISProgramSearch____5046.aspx:

Շվեդիայում գտնվելու ծախսերը ծածկելու համար գոյություն ունեն ֆինանսավորում գտնելու տարբեր ուղիներ՝ կրթաթոշակներ, աշխատանք և այլն: Եթե դուք ունեք կացության թույլտվություն, ապա ուսումնառության ընթացքում Շվեդիայում աշխատելու համար աշխատանքի թույլտվություն հարկավոր չէ:

Շվեդական ինստիտուտը, որը պետական կառույց է, ամեն տարի տրամադրում է 500-ից ավելի կրթաթոշակներ Շվեդիա ժամանող ուսանողներին և հետազոտողներին: Կրթաթոշակները հիմնականում մագիստրոսի աստիճանի կամ խորացված ուսումնառության/հետազոտությունների համար են:

Շվեդիայի համար տրամադրվող կրթաթոշակների ցանկը կարող եք գտնել հետևյալ հասցեում. http://www.studyin.sweden.se/templates/cs/Article____10499.aspx:

2007 թ. Եվրոպայի 150 առաջատար համալսարանների թվում էին Շվեդիայի ութ համալսարաններ.

- Ուպսալայի համալսարան՝ http://www.uu.se/en/
- Լունդի համալսարան՝ http://www.lu.se/lund-university/
- Թագավորական տեխնոլոգիական ինստիտուտ (KTH) http://www.kth.se/?l=en_UK
- Չալմերզ, տեխնոլոգիական համալսարան՝ http://www.chalmers.se/en/
- Ստոկհոլմի համալսարան՝ http://www.su.se/pub/jsp/polopoly.jsp?d=3792
- Ստոկհոլմի տնտեսագիտական ինստիտուտ՝ http://www.hhs.se/default.htm
- Գյոթեբորգի համալսարան՝ http://www.gu.se/english/
- Ումեա համալսարան՝ http://www.umu.se/umu/index_eng.html

4. Կացություն

Եթե անձը ծրագրում է Շվեդիայում մնալ երեք ամսից ավելի երկար ժամկետով, ապա անհրաժեշտ է Շվեդիայի կացության թույլտվություն, որի շնորհման մասին որոշումը կայացնում է Շվեդիայի Միգրացիոն Խորհուրդը: Սովորաբար անձը կարող է ստանալ կացության թույլտվություն վեցամսյա ժամկետից մինչև մշտական բնակության թույլտվություն (անսահմանափակ): Եթե անձը աշխատունակ տարիքի է, աշխատանքի թույլտվությունը ձեռք է բերվում ինքնաբերաբար:

Դուք պետք է ձեր երկրում գտնվող Շվեդիայի դեսպանատուն ներկայացնեք՝ (i) դիմումի ձև, (ii) երկու լուսանկար: Դեսպանատունը կկապվի Շվեդիայի Միգրացիոն Խորհրդի հետ՝ որոշում կայացնելու նպատակով:

Դիմելու պայմանները

- Եթե դուք ամուսնացած եք կամ համատեղ ապրում եք կամ մտադիր եք ամուսնանալ կամ համատեղ ապրել մի անձի հետ, որը Շվեդիայի մշտական բնակիչ է (ձեր դիմումը ներկայացնելուց հետո ձեզ կկանչեն հարցազրույցի դեսպանատանը (հյուպատոսարանում): Դուք պետք է ձեզ հետ վերցնեք Շվեդիայում բնակվող անձի հետ ձեր հարաբերությունը հաստատող որևէ փաստաթուղթ, օրինակ, նամակներ, լուսանկարներ կամ ամուսնության վկայական):
- Եթե դուք 18-ից ցածր տարիքի եք, ամուսնացած չեք, և ձեր ծնողները բնակվում են Շվեդիայում (դուք պետք է կարողանաք ապացուցել, որ նախքան ձեր ծնողի կամ ծնողների Շվեդիա տեղափոխվելը դուք միասին եք ապրել ձեր ծագման կամ հիմնական բնակության երկրում):
- Եթե դուք որևէ անձի ծնողն եք կամ մերձավոր ազգականը, որն այժմ բնակվում է Շվեդիայում (բացառիկ դեպքերում այլ ազգականներ կարող են ստանալ կացության թույլտվություն ընտանեկան կապերի հիմքով: Դուք պետք է կարողանաք ապացուցել, որ ձեր ազգականի Շվեդիա տեղափոխվելուց անմիջապես առաջ դուք միասին եք ապրել, կախված եք այդ անձից այնպես, որ ձեզ համար դժվար է առանձին ապրել: Սա նշանակում է, որ դուք ֆինանսապես, սոցիալապես կամ զգացմունքայնորեն կախված եք այն ազգականից, որն ապրում է Շվեդիայում):

– Որևէ այլ պատճառով ապաստան շնորհված փախստականի կամ որևէ անձի ազգականին կարող է բացառիկ դեպքերում տրամադրվել Շվեդիայի կացության թույլվություն, եթե երկուսն ունեցել են շատ սերտ հարաբերություն, նույնիսկ եթե միասին չեն ապրել իրենց նախկին հիմնական բնակության երկրում:

Որքա՞ն է թույլտվության վավերության ժամկետը

Եթե դուք ձեր ազգականի հետ ապրել եք միասին ձեր ծագման կամ հիմնական բնակության երկրում, ապա Միգրացիոն Խորհուրդը սովորաբար ձեզ կտրամադրի մշտական բնակության թույլտվություն (PUT): Սա ձեզ իրավունք է տալիս ապրել Շվեդիայում այնքան, որքան ցանկանաք:

Եթե դուք ձեր ազգականի հետ չեք ապրել ձեր ծագման կամ հիմնական բնակության երկրում, սակայն մտադիր եք միասին տուն դնել Շվեդիա ժամանելուց հետո, ապա Միգրացիոն Խորհուրդը սովորաբար ձեզ կտրամադրի թույլտվություն 12 ամսով (որոշ դեպքերում՝ վեց ամսով):

Այնուհետև դուք պետք է դիմեք ձեր թույլտվությունը երկարաձգելու համար: Եթե դուք դեռևս միասին եք ապրում, ապա ձեր թույլտվությունը կերկարաձգվի ևս 12 ամսով (կամ՝ վեց ամսով):
Եթե դուք աշխատունակ տարիքի է, ձեզ նաև ինքնաբերաբար կտրամադրվի աշխատանքի թույլտվություն:
Եթե դուք ունեցել եք սահմանափակ կացության թույլտվություն երկու տարով, և ձեր հարաբերությունը դեռևս անխաթար է, ապա ձեզ կտրամադրվի մշտական կացության թույլտվություն:
Լրացուցիչ տեղեկություններ և աշխատանքի թույլտվության դիմումին ընթացք տալու համար պահանջվող փաստաթղթեր կարելի է ձեռք բերել դեսպանատան կայքից կամ Միգրացիոն Խորհրդի կայքից՝ http://www.migrationsverket.se/english.jsp:

Քվոտաների համակարգը/երկկողմ աշխատանքային համաձայնագրեր
Կիրառելի չէ:

5. Ապաստան հայցողներ և փախստականներ

Միգրացիոն Խորհուրդը քննության է առնում ապաստան հայցողների դիմումները, ովքեր ինքնուրույն են հասել Շվեդիա, ժամանակավոր կացարան է առաջարկում ապաստան հայցողներին, վարում է կալանման վայրերը, որտեղ այն անձինք, ում կալանել են, պահվում են փակ դռների ետևում (անձը կարող է կալանվել միայն բացառիկ դեպքերում): Շվեդիան մասնակից է ՄԱԿ-ի Փախստականների կոնվենցիային և, որպես այդպիսին, պարտավոր է ապաստան շնորհել այն անձանց, ովքեր Կոնվենցիայում բնորոշված են որպես փախստականներ: Շվեդիայի օրենքի համաձայն այն անձանց, ովքեր փախստականներ չեն ըստ կոնվենցիայի սահմանման, նույնպես կարող է ապաստան շնորհվել: Օրենքում այս անձինք բնորոշված են որպես «պաշտպանության կարիք ունեցող անձինք» (skyddsbehövande): Պաշտպանության կարիք ունեցող անձինք այն անձինք են, ովքեր թողել են իրենց հայրենի երկիրը և ունեն մահապատժի, խոշտանգումների և այլնի ենթարկվելու հիմնավոր վախ և կարիք ունեն պաշտպանության՝ ներքին կամ արտաքին զինված հակամարտության կամ բնապահպանական աղետի պատճառով:

Ապաստան հայցողների կողմից դիմում ներկայացվելուց հետո Միգրացիոն Խորհուրդը հնարավորինս կարճ ժամկետում քննում է նրանց դիմելու պատճառների համարժեքությունը: Եթե Խորհուրդը որոշում է, որ ապաստան հայցողի դիմումը պետք է մերժվի, ապահովվում է ապաստան հայցողին իրավաբանական աջակցություն ցույց տալը հանրային փաստաբանի ձևով:

Հանրային փաստաբանները Միգրացիոն Խորհրդի կողմից վարձատրվում են՝ ապաստան հայցողներին օգնելու ներկայացնել ապաստանի հայցի հիմքերը: Միգրացիոն Խորհուրդը առանձին քննում է յուրաքանչյուր դեպք: Որոշում կայացնելու համար պահանջվող ժամկետը կախված է այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ վերջին ամիսներին ժամանած ապաստան հայցողների թիվը և նրանց գործերի բարդության աստիճանը: Նրանց, ում ապաստանի դիմումներն ստանում են դրական պատասխան՝ Միգրացիոն Խորհրդի կամ Միգրացիոն Դատարանի կողմից, սովորաբար տրամադրվում է մշտական բնակության թույլտվություն (PUT): Սա նշանակում է, որ դուք իրավունք ունեք ընդմիշտ հաստատվելու Շվեդիայում:

Եթե ձեր ապաստանի դիմումը մերժվում է, կարող եք դիմել աշխատանքի թույլտվության համար: Դուք չեք կարող դիմել, քանի դեռ ձեզ վտարելու որոշումը իրավական ուժի չի ստացել:

Թույլտվություն կարող է շնորհվել, եթե դուք սպասելու ժամանակահատվածում վեց ամիս եղել եք զբաղված (աշխատել եք) և զբաղվածությունը կտևի ձեր դիմելու ամսաթվից հետո առնվազն ևս 12 ամիս: Դուք պետք է ձեր դիմումը ներկայացնեք Միգրացիոն Խորհուրդ ձեր մասին որոշումն իրավական ուժ ստանալուց հետո երկու շաբաթվա ընթացքում: Ապաստանի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք http://www.migrationsverket.se/english.html:

6. Ընտանիքների վերամիավորում

Եթե ցանկանում եք տեղափոխվել Շվեդիա՝ ապրելու մերձավոր ազգականի հետ, որն արդեն Շվեդիայի բնակիչ է, ապա պետք է ունենաք կացության թույլտվություն ձեզ համար: Սա կիրառելի է այն դեպքում, երբ, օրինակ, դուք ամուսնացած եք կամ համատեղ ապրում եք կամ մտադիր եք ամուսնանալ կամ համատեղ ապրել մի անձի հետ, որը մշտապես բնակվում է Շվեդիայում, կամ՝ 18 տարին չլրացած չամուսնացած երեխաների դեպքում (տես «Դիմելու պայմանները» վերը՝ 5-րդ բաժնում): Անհրաժեշտ ձևերի և որոշակի պահանջների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Շվեդիայի Միգրացիոն Խորհրդի կայքը (http://www.migrationsverket.se/english.jsp) և (կամ) ձեր երկրում գտնվող Շվեդիայի դեսպանատան կայքը:

7. Առողջապահական համակարգը

Շվեդիայի առողջապահական համակարգը բաժանված է պետության, կոմսությունների խորհուրդների և համայնքների միջև: Պետությունը պատասխանատու է ընդհանուր առողջապահության և բժշկական խնամքի քաղաքականության համար: Առողջապահության և բարօրության ազգային խորհուրդն զբաղվում է ներգաղթածներին և փախստականներին առնչվող առողջապահական և սոցիալական ծառայությունների հարցերով՝ որպես վերահսկող մարմին: Խորհուրդը հետևում է, թե կոմսությունների խորհուրդներն ինչպես են խնամք տրամադրում ապաստան հայցողներին: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ձեռք բերել Առողջապահության և բարօրության ազգային խորհրդի կայքում՝
http://www.socialstyrelsen.se/en/Subjects/Immigrants+and+refugees/:

8. Սոցիալական ապահովագրության համակարգը

Շվեդիայի սոցալական ապահովագրական գործակալության դերն է վարել սոցիալական ապահովագրությունը և ապահովել, որ դուք ստանաք ձեզ հասանելիք նպաստները: Լրացուցիչ տեղեկություններ կարելի է ձեռք բերել հետևյալ հասցեում.
http://www.forsakringskassan.se/sprak/eng/:
Սոցիալական ծառայությունների մասին ակտը (օրենքը) կարելի է գտնել http://www.socialstyrelsen.se/NR/rdonlyres/09C25501-F370-409A-AF2F-7910FF6FB9D1/8030/20021149_rev.pdf հասցեում:

Այն անձինք, ովքեր կարողանան ապացուցել, որ իրենք գտնվում են բացառիկ մտահոգիչ հանգամանքներում, նույնպես կարող են ստանալ Շվեդիայում մնալու թույլտվություն: Սա վերաբերվում է, օրինակ, այն անձանց, ովքեր տառապում են ծանր հիվանդությամբ, որի բուժումը իրենց երկրում առկա չէ: Որպես կանոն, Շվեդիայում ապաստան շնորհված անձին տրամադրվում է մշտական բնակության թույլտվություն (PUT), ինչը նշանակում է, որ նա կարող է ընդմիշտ մնալ Շվեդիայում: Այլ դեպքերում, որոշակի հանգամանքներում, Շվեդիան կարող է շնորհել ժամանակավոր, հաստատագրված ժամկետով թույլտվություն:

9. Բնակարանային պայմաններ

Շվեդիայում բնակարանային պայմանների վերաբերյալ առավել համակողմանի տեղեկություններ կարելի է ձեռք բերել
http://www.thelocal.se/6428/20070216/ հասցեում:
Ծանոթություն: Այս կայքերի մեծ մասը շվեդերեն լեզվով է: Միգրանտների համար հատուկ պայմաններ չեն գտնվել:

10. Օտարերկրյա դիպլոմների և աստիճանների ճանաչում

Եթե դուք ապրում եք Շվեդիայում և աշխատանք եք փնտրում, կարող է օգտակար լինել ձեր օտարերկրյա դիպլոմների կամ աստիճանների գրավոր, պաշտոնական ճանաչումը: Ձեր կրթությունը և աշխատատեղին համապատասխանությունը գնահատվում են անհատապես՝ այն համալսարանի կամ քոլեջի կողմից, որին դիմում եք՝ ձեր դիմումի մեջ և կից փաստաթղթերում տրամադրված տեղեկությունների հիման վրա: Եթե

դիմումը և կից փաստաթղթերը անգլերենից տարբեր որևէ լեզվով են, ապա կպահանջվեն վավերացված թարգմանություններ: Որոշ համալսարաններ և համալսարանական քոլեջներ կարող են ընդունել փաստաթղթեր փաստաթղթեր նաև եվրոպական այլ հիմնական լեզուներով:

Ավագ դպրոցների օտարերկրյա դիպլոմների պաշտոնական ճանաչումն իրականացվում է Բարձրագույն կրթության ընդունելությունների ազգային գրասենյակի կողմից: Այցելեք հետևյալ կայքը.
http://www.vhs.se/templates/Page.aspx?id=467:

Ընդհանուր ակադեմիական աստիճանների պաշտոնական ճանաչումն իրականացվում է Շվեդիայի Ակադեմիական ճանաչման ազգային տեղեկատվական կենտրոնի կողմից (NARIC), որը Բարձրագույն կրթության այգային գործակալության բաժինն է: Գործակալությունը նաև ԵՄ-ում մասնագիտական որակավորումների ճանաչման վերաբերյալ ԵՄ ընդհանուր դիրեկտիվների առաջին կոնտակտային կետն է: Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝
http://www.hsv.se/2.539a949110f3d5914ec800056285.html:

11. Միգրանտներին առաջարկվող աջակցության ծառայություններ

Ներգաղթածների հիմնահարցեր

Դիմորդների հարցերով Օմբուդսմեն: Եթե դիմորդները դժգոհ են Միգրացիոն Խորհրդի աշխատանքից, կարող են դիմել Դիմորդների հարցերով Օմբուդսմենին: Լրացուցիչ տեղեկությունների համար տես՝
http://www.migrationsverket.se/english.jsp:

Ներգաղթածների ինստիտուտը ոչ-կառավարական (հասարակական) կազմակերպություն է, որը գործում է որպես Հետազոտությունների և փաստաթղթավորման ազգային կենտրոն ներգաղթածների և փախստականների համար, ինչպես նաև որպես քարտուղարություն ներգաղթածների հարցերով զբաղվող այլ կազմակերպությունների համար: Այցելեք՝
http://www.immi.se/insti/english.htm:

Ներգաղթած կանանց ազգային միություն՝ http://www.riffi.org/:
Տերրաֆեմը (Terrafem) ունի ազգային օգնության գիծ ողջ երկրով մեկ՝ բոլոր տարիքի ներգաղթած կանանց համար: Օգնության գիծը առաջարկում է օժանդակություն մոտ 35 լեզուներով՝
http://www.terrafem.org/:

Գենդերային բռնության հիմնահարցեր

Կանանց կացարանների շվեդական ընկերակցություն՝
http://www.kvinnojour.com/hjalpfinns/sprak///:

«Էլեկտրան» առաջարկում է օժանդակություն երիտասարդ աղջիկներին բազմաթիվ լեզուներով՝ http://www.elektra.nu/index2.htm:

Ֆորում. Կանայք և հաշմանդամությունը: Ապահովում է, որ հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների համար հավասարապես հասանելի լինեն իրենց իրավունքները.
http://www.kvinnor-
handikapp.se/home/page.asp?sid=680&mid=2&CatId=3174:

«Կանայք կարող են» կազմակերպությունն զբաղվում է կանանց հավասար իրավունքների խթանմամբ.
http://www.kvinnorkan.se/index.php?option=com_content&task=view&id=18&Itemid=15:

Կանանց և աղջիկների կացարանների ազգային միությունը Շվեդիայում կանանց և աղջիկների՝ ողջ երկիրն ընդգրկող ցանց է.
http://www.roks.se/languages/english_about.htm:

Թրաֆիքինգ

Շվեդ կանանց լոբբի՝ աջակցում է թրաֆիքինգից տուժածներին.
http://www.sverigeskvinnolobby.se/home/page.asp?sid=2357&mid=2&PageId=18856:

Մարդու իրավունքների շվեդական ՀԿ հիմնադրամ.
http://www.humanrights.se/:

Միգրանտների ընդհանուր հարցեր

Դարպաս դեպի Շվեդիայի պետական հատված անգլերեն և սերբերեն լեզուներով. http://www.sverige.se/

Բազմազգ հետազոտությունների կենտրոն.
http://www.multietn.uu.se/index_eng.htm

Միջազգային միգրացիայի և էթնիկ հարաբերությունների հետազոտությունների կենտրոն.
http://www.ceifo.su.se/pub/jsp/polopoly.jsp?d=6667&a=24835

Միգրանտների նկատմամբ գործադրվող խտրականության և նրանց մարդու իրավունքների խախտման հիմնահարցեր

Խորհրդարանի Օմբուդսմեն: Զբաղվում է պետական պաշտոնյաների անարդարացի վերաբերմունքից բողոքող անհատներով.
http://www.jo.se/Page.aspx:

Էթնիկական խտրականության հարցերով Օմբուդսմեն. http://www.do.se/
էլ. փոստ՝ do@do.se
Հավասար հնարավորությունների հարցերով Օմբուդսմեն: Զբաղվում է հավասար հնարավորությունների և սեռի հիմքով խտրականության հարցերով. http://www.jamombud.se/:

Սեռական կողմնորոշման հիմքով խտրականության դեմ պայքարի Օմբուդսմենի գրասենյակ. http://www.homo.se/o.o.i.s/1211

Լեզուների դասընթացներ

Շվեդիայում լեզուների անվճար դասընթացներ առկա են միայն ապաստան հայցողների համար: Այդուհանդերձ, երկրում կան մի շարք ուսումնական ընկերակցություններ, որոնք շվեդերենի դասընթացներ են առաջարկում բոլոր խմբերին: Դուք կարող եք համապատասխանել Շվեդիայում համալսարանական դասընթացների (լրիվ կամ մասամբ) համար դիմելու պահանջներին: Լեզվի տիրապետման որոշակի մակարդակ ձեռք բերելուց հետո կարող եք դա ապացուցել ճանաչված թեստով:

ՄՄԿ-ի գրասենյակը Շվեդիայում

Շվեդիայում ՄՄԿ-ի գրասենյակ գոյություն չունի: Փոխարենը անկանոն միգրանտների աջակցվող կամավոր վերադարձի հայցերով, ինչպես նաև Շվեդիայում միգրանտներին առնչվող այլ ծառայություններով զբաղվում է ՄՄԿ-ի Հելսինկիի գրասենյակը: Վերջինս տրամադրում է Շվեդիայից դեպի աշխարհի բոլոր երկրներ կամավոր վերադարձի ծառայություններ:
ՄՄԿ-ի ընդհանուր տեղեկատվական գիծ՝ +358 9 684 1150
Գործում է երկուշաբթիից ուրբաթ՝ ժամը 9:00-11:30 և 12:00-15:00 (Շվեդիայի ժամանակով):

Շվեդական կարմիր խաչ

Փողոցի հասցեն՝ Hornsgatan 54 (Հորնսգատան 54)
Փոստային հասցեն՝ PO Box 17 563
118 91 Stockholm
Հեռախոս (SPDT)՝ 08-452 46 00, Միջազգային՝ +46-8-452 46 00
E.mail: info@redcross.se
www.redcross.se

12. Քաղաքացիություն

Շվեդիայի քաղաքացիության հարցերով զբաղվում է Շվեդիայի Միգրացիոն Խորհուրդը:

Շվեդիայի քաղաքացիություն կարելի է ձեռք բերել պարզ ընթացակարգով (ծանուցմամբ), եթե քաղաքացիությունը հիմնված է ծնունդի, որդեգրման (եթե ծնողներից մեկը Շվեդիայի քաղաքացի է) կամ օրինականացման (ծնողների ամուսնություն) վրա: Մեկ այլ հիմնական սկզբունք է քաղաքացիություն չունենալու երևույթի առաջացման կանխումը:

Միգրանտները կարող են Շվեդիայի քաղաքացիություն ձեռք բերել նաև դիմումով (հպատակագրում՝ նատուրալիզացիա), եթե անձն ունի մշտական բնակության թույլտվություն, եթե մնացել է Շվեդիայում հինգ կամ ավելի տարի, կամ՝ չորս տարի (եթե ունի փախստականի կարգավիճակ կամ քաղաքացիություն չունեցող անձ է):

Երկակի քաղաքացիության առաջացումը կանխող նախկին սկզբունքը վերացվել է, և օրենքը լիարժեք կերպով ընդունում է երկակի

քաղաքացիություն: Շվեդիայի 2001 թ. Քաղաքացիության ակտը կարելի է գտնել
http://www.sweden.gov.se/content/1/c6/01/94/49/a6b33bc0.pdf հասցեում:

Քաղաքացիության համար դիմելու վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Շվեդիայի Միգրացիոն Խորհրդի կայքը՝
http://www.migrationsverket.se/english.jsp:

13. Միգրացիայի համար պատասխանատու պետական կառույցներ

Արդարադատության նախարարությունը պատասխանատու է Շվեդիայի միգրացիոն քաղաքականության համար, որը ներառում է ապաստան հայցողների և ներգաղթողների ընդունումը, փախստականներին կացարանով ապահովումը, բոլորի համար հավասար իրավունքներին, պարտականություններին և հնարավորություններին վերաբերող հիմնահարցեր: Նշված հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Շվեդիայի կառավարության կայքը՝ http://www.sweden.gov.se/sb/d/3083, և Արդարադատության նախարարության կայքը՝ http://www.sweden.gov.se/sb/d/584:

Ինտեգրման և գենդերային հավասարության նախարարությունը վարում է ինտեգրման քաղաքականությունը, որը ներառում է բոլորի համար հավասար իրավունքներին, պարտականություններին և հնարավորություններին վերաբերող հիմնահարցեր, ներգաղթածներին Շվեդիայի հասարակությանը միասնացնելը, Շվեդիայի քաղաքացիությունը, ինչպես նաև դրամաշնորհներ համայնքներին՝ փախստականներին ընդունելու և խտրականության, քսենոֆոբիայի (այլատյացություն, օտարավախություն) և ռասիզմի դեմ պայքարի միջոցներ ձեռնարկելու համար: Նշված հարցերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ և օրենսդրական ակտեր կարելի է գտնել http://www.sweden.gov.se/sb/d/2188/a/19443 կայքում:

Շվեդիայի Միգրացիոն Խորհուրդ
http://www.migrationsverket.se/english.jsp